

**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ԴՐԱ ԳԻՏԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

ՀՏԴ 941(479.25)

Մանվելյան Արմեն

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի Միջազգային հարաբերությունների բաժնի
ավագ գիտաշխատող, պ.գ.թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն
armenmanvelyan@gmail.com

Պետական անվտանգությունը պետք է դիտարկել կայուն զարգացման տեսանկյունից: Երկար պատերազմներն անցալուծ հանգեցրել են Եվրոպայում պետությունների միջև անվտանգության հարաբերությունները կարգավորելու առաջին փորձին՝ Վեստֆալյան պայմանագրին:

ԽՍՀՄ փլուզումը և դրան հաջորդած 32 տարիները ցույց տվեցին, որ անվտանգության համակարգերն անկատար են և խոցելի: Վերջին մի քանի տարիների ընթացքում բազմաթիվ ռազմական հակամարտություններ հերթական անգամ ապացուցեցին, որ, այսպես կոչված հետպատերազմյան անվտանգության համակարգն այլևս չի գործում:

Վերջին տասնամյակներում ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում ստեղծել անվտանգության գնահատման նոր մեթոդաբանություն:

Պետք է արժանագրել, որ անվտանգության գնահատման և վերլուծության ընդհանուր մոդելներ գոյություն չունեն, դրանք պետք է իրականացվեն տարածաշրջանային և գլոբալ աշխարհաքաղաքական առանձնահատկությունների հաշվառմամբ: Պետությունները և հատկապես ՀՀ-ն պետք է մշակեն յուրահատուկ մեթոդաբանություն, որը հատուկ է մեր տարածաշրջանին և մեր էթնոքաղաքական իրողություններին, որոնք բխում են պետության անվտանգության շահերից:

Պետությունը պետք է շահագրգռված լինի ակադեմիական հետազոտությունների անցկացմամբ, հատկապես անվտանգության մարտահրավերների և ռիսկերի շարունակական աճի պայմաններում, ինչը հիմք կհանդիսանա անվտանգության միջավայրի գնահատման համար:

Բանալի բառեր՝ Պետություն, կառավարում, անվտանգություն, ռազմավարություն, հետյալտյան անվտանգային համակարգ, վերլուծություն, մեթոդաբանություն:

* Հոդվածը ներկայացվել է 2.08.2022:

Տպագրության է երաշխավորել ք.գ.դ. պրոֆեսոր, Գ.Քեռյանը: 14.08.2022:

Հոդվածը տպագրության է ընդունվել 25.08.2022:

Ներածություն

Պետության կառավարման կարևորագույն պայմանը նրա անվտանգության հասկացողության հստակեցումն է և այդ անվտանգության պահպանումն ու զարգացումը: Անվտանգությունը՝ իր ամբողջ բազմազանությամբ՝ թե ռազմական, թե տնտեսական և պարենային, թե հոգևոր, թե էներգետիկ ևայլն, իր բոլոր մակարդակներում ուսումնասիրման, վերլուծության և զարգացման կարիք ունի:

Պետության անվտանգությունը հասկացությունը նախ և առաջ պետք է դիտարկել պետության գոյության ու կայուն զարգացման տեսանկյունից, քանի որ պետական համակարգերը ստեղծվում էին ու մինչ օրս էլ ստեղծվում են այս կամ այն էթնիկ, կրոնական կամ այլ տիպի խմբերի շահերը պաշտպանելու համար: Պետական միավորների ստեղծումը նախ և առաջ նպատակ էր հետապնդում պաշտպանել տարբեր խմբերի ֆիզիկական անվտանգությունը, կամ, ինչպես այս հարցերով հայտնի մասնագետ պրոֆեսոր Բարի Բուզանը կասեր, լուծել «անվտանգության ամենացածր՝ ողջ մնալու մակարդակը»¹:

Հետագայում ևս սեփական պետական միավորները ստեղծելու ձգտող ազգերը և ազգությունները նախ և առաջ ցանկանում էին լուծել իրենց համար առաջնային կենսական նշանակության ֆիզիկական գոյության կամ գոյատևման, հարցը: Պետական միավորները ապահովում էին ներքին անվտանգության խնդիրները, վերջիններս իրենց գոյատևման համար ստիպված էին անընդմեջ պատերազմներ մղել, ինչը նաև փոխում էր անվտանգություն հասկացությունը, ստիպելով այդ պետություններին շատ դեպքերում տվյալ հարցի պատասխանը փնտրել իրենց սահմաններից դուրս՝ միջազգային հարաբերությունների մակարդակում:

Նախկինում ընթացող երկարատև պատերազմներն հանգեցրին Եվրոպայում պետությունների միջև անվտանգային հարաբերությունների կարգավորման առաջին փորձի՝ Վեստֆալյան հայտնի պայմանագրի կնքմանը², որը նաև առաջին դեպքն էր Եվրոպայի պատմության մեջ՝ ստեղծել անվտանգության միջազգային համակարգ: Այսինքն, անվտանգությունը ոչ միայն պետական միավորների ներքին, այլև արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է:

Վեստֆալյան պայմանագիրը հիմք հանդիսացավ հետագայում նմանատիպ այլ պայմանագրերի կնքմանը, որոնք ստորագրվում էին Եվրոպայում ընթացող խոշորամասշտաբ բոլոր պատերազմների հետևանքով, արտացոլելու համար դրա արդյունքները և փորձ էր արվում ստեղծել անվտանգության միջազգային նոր համակարգեր: Նմանատիպ պայմանավորվածություններ՝ անվտանգության միջազգային համակարգի ստեղծման շուրջ տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում:

¹Barry Buzan, *People, States and Fear: An Agenda For International Security Studies in the Post-Cold War Era* - Barry Buzan., p. 57.

https://www.academia.edu/4780500/People_States_and_Fear_An_Agenda_For_International_Security_Studies_in_the_Post_Cold_War_Era_Barry_Buzan.

²Տիւ. Milan Jazbec, “European Integration Process Thirty Years after the End of the Cold War”, *European Perspectives – International Scientific Journal on European Perspectives*, volume 10, number 2 (18), pp 127-152, October 2019. https://www.europeanperspectives.org/storage/50/08-International-Scientific-Journal-on-European-Perspectives-Julij-2020_EUROPEAN-INTEGRATION.pdf.

1943թ. Թեհրանի և ապա 1945թ. Յալթայի¹ կոնֆերանսներում հակահիտլերյան կոալիցիայի անդամ պետությունները նախանշեցին և ձևավորեցին անվտանգության հետագա միջազգային համակարգը, որն իր ողջ թերություններով հանդերձ գործում է մինչ օրս:

Սակայն ԽՍՀՄ-ի քայքայումը և հետագա անցած 32 տարիները ցույց տվեցին, որ անվտանգության այդ համակարգը թերի են ու խոցելի: Վերջին մի քանի տարիների ընթացքում, տեղի ունեցած ռազմական բազմաթիվ բախումները և պատերազմները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ անվտանգության հետալաթյան համակարգը այլևս չի գործում և տարեցտարի կորցնում է անվտանգության ապահովման իր նախկին բովանդակությունը:

Պետական անվտանգություն

Վերը նշված փոփոխությունները և առաջացած նոր մարտահրավերները ստիպում են վերանայել անվտանգության համակարգերի մասին նախկին մոտեցումներն ու պատկերացումները: Սա նաև կարևոր պայման է անվտանգության թեմայի շուրջ ապահովման նոր քննարկումների իրականացման խթանման համար, ինչը հնարավորություն կտա միջազգային անվտանգության ներկա փոփոխվող պայմաններում հասկանալ անվտանգության զարգացման ներկա դինամիկան, նոր մարտահրավերները և սպառնալիքները, որոնք ի հայտ են գալիս տեղի ունեցող աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական, տեխնոլոգիական և արագ ընթացող այլ փոփոխությունների պայմաններում:

Այս թեման հատկապես արդիական է Հայաստանի համար, որը բախվել է վերը նշված բոլոր խնդիրներին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Ղարաբաղյան պատերազմները և դրա հետևանքով ձևավոխվող ռազմաքաղաքական ճարտարապետությունը Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում և Արևելյան Եվրոպայում վերջին տարիներին տեղի ունեցող փոփոխությունները, ռուս-ուկրաինական պատերազմը, տնտեսական և տեխնոլոգիական սրընթաց զարգացումները, ինչպես նաև նավթի ու գազի համաշխարհային շուկայում տեղի ունեցող նոր բաժանումները, անվտանգության տեսակետից նոր մարտահրավեր են առաջադրում, որոնք առանձին քննարկման և վերլուծության կարիք ունեն:

2016թ. ապրիլյան և 2020թ. 44օրյա պատերազմները եկան հաստատելու, որ թե Հայաստանը և թե ամբողջ տարածաշրջանը անվտանգային միջավայրի գնահատման և չափորոշիչների որոշման նոր համակարգերի՝ վերլուծական ու մեթոդաբանական մշակումների, կարիքը ունեն, ինչը պետք է համապատասխանի այն խնդիրներին ու առաջադրանքներին, որոնց բախվում են բոլոր պետությունները վերը նշված փոփոխությունների պայմաններում:

Հայաստանը գտնվելով բավականին ագրեսիվ շրջապատում, սահմանակից Ադրբեյջանին և Թուրքիային, անմիջապես իր վրա է զգում անվտանգության ոչ լիարժեք համակարգի խնդիրները, դա հատկապես նկատելի են 44օրյա պատերազմի

¹Տե՛ս. Ariel Davis, “Understanding the Role of Tehran and Yalta in Creating the Post-War Order”, The General Assembly, Vol. 2, No. 1, Jan. 2021,
file:///C:/Users/Lenovo/Downloads/jhai,+Tehran+and+Yalta_Final.pdf.

պարտությունից հետո: Անվտանգային միջավայրի փոփոխությունները Հարավային Կովկասում, արցախյան հիմնախնդրի փաստացի վերաձևակերպման փորձերը, ստիպում է անվտանգության նոր օրակարգ սահմանել՝ հիմնվելով անվտանգային իրավիճակի դինամիկայի տրամաբանության և հնարավոր պատերազմի տեսլականի հստակեցման վրա:

Անվտանգության նոր օրակարգի հիմնախնդիրը, կամ, ավելի ճիշտ, այդ հարցի շուրջ առկա փոփոխությունների հասկացության տրամաբանության բացակայությունը, նոր խնդիրներ է առաջացնում, ինչը նաև թույլ չի տալիս հասկանալ պետության ռազմավարական նշանակություն ունեցող անվտանգության հիմնախնդրի ձևավորման կարևորությունը, որը հնարավորություն կտա հստակեցնել պետության համար քաղաքական, տնտեսական ու ռազմական զարգացման օրակարգը՝ դրանց դինամիկան, առկա մարտահրավերները և սպառնալիքները գնահատելու ու վերլուծելու համար:

Նմանատիպ վերլուծությունները հարկավոր են պետության համար իր քաղաքական, տնտեսական զարգացման հիմնական ուղենիշների մշակման առումով, հաշվի առնելով տեղի ունեցող փոփոխությունների դինամիկան: Առանց անվտանգային օրակարգի հստակեցման դժվար է պատասխանել, թե արդյոք վարվող տնտեսական կամ քաղաքական զարգացման ուղղությունները ճիշտ են և համապատասխանում է այն մարտահրավերներին, որոնց բախվում է կամ կբախվի պետությունը իր զարգացման ընթացքում:

Անվտանգությունը որպես գիտություն

Երկրորդ համաշխարհային պատերազմն առիթ դարձավ, որ անվտանգությունը որպես առանձին գիտական ուղղություն հետազոտման առարկա դառնա Արևմտյան գիտական շրջանակների մոտ: Պատերազմը, և դրանից հետո ձևավորված միջազգային իրավիճակը, հատկապես անվտանգության տեսակետից, նոր մոտեցումների ու մշակումների կարիք ուներ: Երկրորդ համաշխարհային պատերազմի փորձը ցույց էր տվել այն թերությունները, որոնք առկա էին անվտանգության համակարգում թե Եվրոպայում և թե ամբողջ աշխարհում:

Հետպատերազմյան շրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության նոր ձևաչափ էր հասունանում Եվրոպայում և ամբողջ աշխարհում, հետևաբար հարկավոր էր ուսումնասիրել ձևավորվող անվտանգության համակարգերն ու այն բանաձևերը, որոնք, ըստ այդ շրջանի մասնագետների, կապահովեին երկարատև խաղաղություն ու կայունությունը ողջ աշխարհում:

Անվտանգության թեմայով առաջին հետազոտողներից էր Յել համալսարանի պրոֆեսոր Առնոլդ Վոլֆսը: Վերջինիս աշխատանքը, որը կոչվում էր ««Ազգային անվտանգությունը» որպես երկիմաստության սիմվոլ»¹ արտահայտում էր այն ժամանակվա տրամադրությունները անվտանգության խնդրի վերաբերյալ: Երկրորդ համաշխարհային պատերազմը ցույց տվեց, որ անվտանգության գործող համակարգերը և դրա շուրջ իրականացված հետազոտությունները միշտ չէ, որ արտահայտում էին այն

¹ Arnold Wolfers, «"National Security" as an Ambiguous Symbol», Political Science Quarterly, Vol. 67, No. 4, (Dec., 1952), pp. 481-502. file:///C:/Users/User/Downloads/Arnold%20Wolfers%20-%20National%20Security%20as%20an%20Ambiguous%20Symbol.pdf

քաղաքական իրողությունները, որոնք ստեղծվել էին տարածաշրջանում, և դրանց գնահատման կողմնորոշիչները շատ դեպքերում սխալ էին:

Ստեղծված իրավիճակը, ըստ Վոլֆրսի, պատճառ էր միջազգային հարաբերություններում անվտանգության գնահատման անկարողությանը: Վերջինս միաժամանակ կարծում էր, որ նաև իրականացվում էր այդ տերմինի՝ անվտանգության, նշանակության գերազնահատում, որի պատճառը, դրա սխալ մեկնաբանությունն ու բացատրությունը էր միջազգային հարաբերությունների այն ժամանակվա գրականության մեջ: Այս իրավիճակը նա համարում էր երկիմաստ, քանի որ անվտանգության հիմնախնդրի թե թերազնահատումը և թե դրա նշանակության գերազնահատումը հավասարապես վտանգավոր է պետության համար¹:

Միաժամանակ Առնոլդ Վոլֆրսն առաջ էր քաշում անվտանգության նոր համակարգի կոնցեպտը, որը պետք է հենվեր ոչ թե առանձին վերցրած պետության անվտանգության շահերի՝ դրա հանդեպ նրա ընկալումների ու, ընդհանրապես, նեղ ազգային խնդիրների, այլ անվտանգության միջազգային լայն հասկացողության վրա, որը իր հերթին պետք է հենվեր անվտանգության կոլեկտիվ ընկալումների ու դրա շուրջ շահագրգիռ պետությունների շահերի համընկման հենքի վրա: Վերջինս առաջարկում էր ստեղծել անվտանգության որոշակի գոտիներ, որոնք նա կոչում էր «զերծ պատերազմից» տարածքներ²:

Վոլֆրսը ընդունում էր, որ անվտանգային տարածքներ ստեղծելու համար հարկավոր է անվտանգության միջազգային նոր համակարգ, որը կարող է գործել միջազգային սուբյեկտ համարվող պետությունների շահերի ընդհանրության, ռազմական հավասարակշռության պայմաններում, սակայն հարցն այն էր թե ինչպես հասնել հավասարակշռության: Հարկավոր էր անվտանգային ռազմավարության մի համակարգ, ինչը համահունչ կլիներ նոր սպառնալիքներին ու կպատասխաներ հարցին՝ արդյոք տեսանելի ապագայում հնարավոր կլինի կանխել միջազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերները, թե ոչ:

Խոսելով անվտանգության տարբեր ուղղությունների մասին նշենք, արդի գիտության մեջ այս հարցում մոտեցումները տարբեր են, այս հարցով մասնագետ, Փրինսթոնի համալսարանի պրոֆեսոր Դեյվիդ Բոլդվինը նշում է, որ «տնտեսական կամ էկոլոգիական անվտանգության հարցերով մասնագետները օգտագործում են անվտանգության բացարձակ տարբեր սկզբունքները, որոնք ֆունդամենտալ կերպով կարող են տարբերվել միմյանցից»³ : Վերջինս շեշտում է, որ սկզբունքները տարբեր են անվտանգության տարբեր համակարգերի համար, թեև միաժամանակ կան ընդհանրություններ ևս, սակայն սկզբունքային տարբերությունները ազգային պետությունների ու այլ տիպի պետությունների միջև՝ անվտանգության նկատմամբ մոտեցումների հարցում էական են, ինչը բացատրվում է նաև ազգային շահի մեկնաբանության տարբերությամբ:

Այսինքն ազգային շահ հասկացության տարբերությունները տարբեր պետություն-

¹ Sku. Arnold Wolfers, «"National Security" as an Ambiguous Symbol»...

² Նույն տեղում:

³ David A. Baldwin, The concept of security, Review of International Studies (1997), 23, 5-26 Copyright © British International Studies Association, [https://www.princeton.edu/~dbaldwin/selected%20articles/Baldwin%20\(1997\)%20The%20Concept%20of%20Security.pdf](https://www.princeton.edu/~dbaldwin/selected%20articles/Baldwin%20(1997)%20The%20Concept%20of%20Security.pdf)

ներում հանգեցնում են ազգային անվտանգության հասկացության տարբերության: Սակայն անվտանգության հասկացության բազմազանությունը և այդ հասկացության տարբերակման պայմաններում էլ կան ընդհանրություններ, որոնց վրա ուշադրություն են դարձնում շատ գիտնականներ, որոնք զբաղվում են անվտանգություն հասկացության սահմանման ընդհանրությունները հայտնաբերելու գործով, ինչը սակայն, նկատենք, որոշ գիտնականների կողմից անհմատ աշխատանք է որակվում¹ :

Ըստ մեկ այլ գիտնականի, Ստոկհոլմի և ամերիկյան մի շարք առաջատար համալսարանների պրոֆեսոր Քյել Գոլդմանի՝ ամբողջ տարբերություններով հանդերձ կան նաև ընդհանրություններ, որոնք կարելի է հասկանալ գտնելով ընդհանուր և միավորող էլեմենտները, ասենք սոցիալական, տնտեսական, քաղաքական ընդհանրությունները և այլն: Անվտանգության, իրարից տարբերվող սկզբունքների համեմատությամբ, ինչպես նաև գիտնականների միջև ընդհանուր քննարկումների կազմակերպման արդյունքում, Գոլդմանը կարծում է, որ այնուամենայնիվ, «անվտանգության վերաբերյալ տարբեր դպրոցների մոտեցումների միջև կարող են ընդհանրություններն ավելին լինեն, քան մենք սպասում էինք»² :

Անվտանգության վերաբերյալ տարբեր դպրոցների մոտեցումների ու բազմազանությունների պայմաններում, թերևս հետաքրքիր է Լոնդոնի տնտեսագիտական դպրոցի (London School of Economics) պրոֆեսոր՝ Բարի Բուզանի ուսումնասիրությունները անվտանգության հարցով, որտեղ նա փորձել է ընդհանրացնել աշխարհում առկա մոտեցումները և տալ ընդհանուր կարծիք անվտանգության հիմնախնդրի վերաբերյալ:

Իր աշխատանքներում, նվիրված միջազգային հարաբերությունների ու անվտանգության հիմնախնդիրներին, պրոֆեսոր Բարի Բուզանը առաջ է քաշել մի շարք մոտեցումներ, որոնցով փորձել է սահմանել անվտանգության նկատմամբ համընդհանուր ընդունված հնարավորինս շատ պետությունների շահերից բխող մոտեցումներ, որոնց հիման վրա էլ ձևավորվել է այսպես կոչված Կոպենհագենյան դպրոցը՝ անվտանգության խնդիրների նկատմամբ իր մոտեցումներով ու ուրույն սկզբունքներով:

Խոսելով անվտանգության հիմնահարցի մասին, պրոֆեսոր Բուզանը այս հարցում ընդհանրացնում է անվտանգության հետևյալ 5 կարևորագույն ուղղությունները՝

- քաղաքական,
- ռազմական,
- տնտեսական,
- սոցիալական
- բնապահպանական³:

Սակայն չի կարելի նշված այս ուղղությունները գերակա համարել, քանի որ ժամանակի և մարտահրավերների փոփոխման հետ միապին փոխվում են նաև անվտանգության հիմնական ուղղությունները ևս: Գիտնականի նշված ուղղությունները կարող են փոխվել պայմանավորված պետությունների, նրանց աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկություններից և այլ խնդիրներից, միաժամանակ պետք է շեշտել, որ

¹ Sku David A. Baldwin, The concept of security...,

² Sku Kjell Goldmann, 'Im Westen Nichts Neues: Seven International Relations Journals in 1972 and 1992.

³ Sku Barry Buzan, "New Patterns of Global Security in the Twenty-First Century", International Affairs, 67.3 (1991), 433.

նշված հինգ ուղղությունները իրարից առանձին չեն և անվտանգություն ասելով պետք է հասկանալ դրանց միասնությունը ամբողջական պատկերը ստանալու համար: Այսինքն պետության համար անվտանգություն ասելով նախ և առաջ պետք է հասկանալ նշված ուղղությունները միասնաբար, իսկ դրանք իրենց հերթին առանձին-առանձին ուսումնասիրման և վերլուծության կարիք ունեն՝ պայմանավորված յուրաքանչյուր պետության առանձնահատկությամբ:

Ըստ Բուզանի անվտանգություն ասելով պետք չէ այն հասկանալ միայն որպես պետական անվտանգություն, գոյություն ունեն անվտանգության տարբեր մակարդակներ, և այստեղ Բարի Բուզանը առանձնացնում է 3-ը՝ անհատական, պետական և միջազգային¹: Հասկանալի է, որ անվտանգությունը լիարժեք կարող է գործել միայն այս երեք համակարգերի փոխգործունեության պայմաններում, հակառակ դեպքում այն ոչ լիարժեք է: Եթե պետությունը կարողանում է ապահովել ազգային անվտանգության համապատասխան մակարդակը, սակայն չի հարգում իր քաղաքացիների անհատական անվտանգության իրավունքը, ապա նմանատիպ պետությունները գտնվում են անվտանգության ռիսկային գոտիներում, կամ հակառակը, երբ վատ հարաբերությունները հարևանների հետ սպառնալիքներ են ստեղծում որևիցե պետության համար, ապա սա նույնպես նշանակում է, որ անվտանգության նշված երեք մակարդակներում կա խզում, հետևաբար նմանատիպ պետություններում ու տարածաշրջաններում անվտանգության լիարժեք ու գործուն համակարգեր չեն կարող լինել և գոյություն ունեն ռիսկեր, որոնք որոշակի սպառնալիքներ են ստեղծում:

Անվտանգության նման մեկնաբանությունը Բարի Բուզանը անվանում է նեոռեալիստական: Վերջինս կարծում էր, որ միջազգային հարաբերությունները քաոսիկ են և չկա կարգավորման ու կառավարման որևիցե ընդունելի համակարգ: Միաժամանակ նա կարծում էր, որ անվտանգության նախկին մեկնաբանությունը որպես պայքար իշխանության համար, հնացել է և հետևաբար, այն վերանայման կարիք ունի²:

Անվտանգության հիմնախնդրի վերանայման համար շատ կարևոր է դրա դինամիկայի՝ փոփոխությունների տրամաբանությունը հասկանալ, ինչը հնարավոր է իրականացնել անվտանգային չափման միջոցով, սա մի գործընթաց է, ինչով արևմտյան վերլուծական մի շարք կառույցներ զբաղվում են, օրինակ ժամանակ առ ժամանակ ներկայացնելով անվտանգային միջավայրի չափման արդյունքում ստեղծված քարտեզները, ինչը նույնպես կարևոր է տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները և դրա վրա միջազգային կառույցների ազդեցությունը հաշվի առնելու համար: Այսինքն անվտանգային միջավայրի քարտեզագրումը հնարավորություն է տալիս հասկանալ այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում աշխարհի այս կամ այն տարածաշրջանում՝ պայմանավորված անվտանգային դինամիկայի փոփոխությամբ:

Սակայն չափման գործող այդ համակարգերը միշտ չէ, որ ամբողջությամբ հաշվի են առնում տարբեր տարածաշրջանների առանձնահատկությունները՝ դրանց մշակութային, կրոնական, էթնիկական, քաղաքական, պատմական, տնտեսական, սոցիալական, ռազմական ու դեմոգրաֆիկ յուրահատկությունները: Նման մոտեցման բացակա-

¹ Barry Buzan, *People, States and Fear*, 146.

² Տե՛ս. Barry Buzan, “New Patterns of Global Security in the Twenty-First Century”, *International Affairs*, 67.3 (1991).

յությունը հնարավորություն չի տալիս կատարել անվտանգային դինամիկայի փոփոխման չափումը ամբողջությամբ, այսինքն հասկանալ և փորձել կանխատեսել այն միտումները, որոնք առկա են դրանց զարգացման գործընթացում:

Եվ այս պայմաններում շարունակական հարց է առաջանում, ինչ չափորոշիչներով հաշվարկել այդ փոփոխությունները ու հասկանալ դրանց զարգացման ուղղությունն ու դինամիկան: Սա ռազմավարական նշանակության հարցադրում է քանի որ այդ հարցի պատասխանից է շատ դեպքերում կախված անվտանգային նոր քաղաքականության մշակման հնարավորությունները, առկա վտանգները, ռիսկերն ու մարտահրավերները հասկանալու ու դրանց նվազմանն ու կանխարգելմանը կամ չեզոքացմանը նպատակաուղղված քաղաքականություն մշակելու համար:

Նմանատիպ հաշվարկներ հնարավոր է իրականացնել համապատասխան մեթոդաբանության, տեխնոլոգիաների մշակման, չափման որոշակի ինդեքսների ներմուծման ու դրանց միջոցով անվտանգային դինամիկայի ալգորիթմը որոշելու միջոցով, ինչը հնարավորություն կտա արդեն հասկանալ թե ողջ աշխարհում և թե առանձին տարաշրջանում անվտանգային իրավիճակի փոփոխման ու զարգացման ուղղությունները:

Անվտանգության չափման մեխանիզմների մասին

Հոդվածում անդրադարձել ենք արդեն անվտանգային միջավայրի չափում հասկացությանը, որի մշակումներով շատ հաճախ ստեղծվում են նաև այսպես կոչված անվտանգային քարտեզներ, ինչը հնարավորություն է տալիս տեսնելու աշխարհում և առանձին վերցրած տարածաշրջաններում անվտանգային միջավայրի փոփոխման դինամիկան: Սա հնարավորություն է տալիս նաև հետևել աշխարհում տեղի ունեցող անվտանգային իրավիճակի ընդհանուր պատկերին և թե այն փոփոխություններին, որոնք կարող են տեղի ունենալ երկրագնդի այս կամ այն կետում ընթացող զարգացումների պատճառով:

Անվտանգային իրավիճակը ամբողջ աշխարհում փոխկապակցված է և ցանկացած փոփոխություն, որը տեղի է ունենում աշխարհի այս կամ այն մասում, այս կամ այն չափով արտահայտվում է բոլորի վրա: Հետևաբար նմանատիպ քարտեզների կազմումը հնարավորություն կտա հասկանալ թե այդ միջավայրը և թե այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում: Նմանատիպ քարտեզների ստեղծման փորձ կատարվում է անվտանգության խնդիրներով զբաղվող մի շարք կառույցների՝ հետազոտական ինստիտուտների ու տարբեր մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Նման քարտեզները մեծ պահանջարկ են վայելում, քանի որ դրանք հնարավորություն են տալիս տեսնել անվտանգային իրավիճակի փոփոխությունների դինամիկան աշխարհում:

Բացի անվտանգության չափման քարտեզներից, կան նաև ռիսկերի գնահատման քարտեզներ՝ մասնավորապես ռիսկերի գնահատման համակարգում փորձ է արվում ցույց տալ այն խնդիրները, որոնք ազդում են ընդհանուր անվտանգային համակարգերի՝ քրեական հանցագործությունների, մարդկանց առևանգման կամ ասենք կիբեռանվտանգության վիճակի վրա:



Նկար 1. Ներկայացված է մարդկանց առևանգման ռիսկի աստիճանը աշխարհի տարբեր պետություններում¹:

Կիբեռանվտանգությամբ զբաղվող քարտեզները օգնում են հասկանալ կիբեռ հարձակման վտանգի աստիճանը աշխարհում և այսպես շարունակ²: Կան վտանգների քարտեզներ, որոնք նշում են մարդկության կենսագործունեության համար անհրաժեշտ պաշարների քանակը՝ օրինակ խմելու ջրի, նավթի կամ այլ ռեսուրսների:

¹ Global Risk and Crisis Management, <https://www.result-group.com/en/world-threat-map-2017-gefahrenkarte/>

² Global Security Map, <http://globalsecuritymap.com/>



Նկար 2. Անվտանգության դինամիկան Ասիական մայրցամաքում¹:

Ամերիկյան ՖԱՄ միջազգային անվտանգությամբ զբաղվող կազմակերպությունը ամեն տարի ներկայացնում է անվտանգության դինամիկան աշխարհում: Տվյալ քարտեզում, որտեղ ներկայացված է Ասիա մայրցամաքը, 8 հիմնական չափորոշիչների՝ քրեական իրավիճակի, ցույցերի, էթնիկ հակամարտությունների, ապստամբությունների, մարդկանց առևանգումների, քաղաքական ու միջկրոնական հակամարտությունների, ահաբեկչությունների ու պատերազմների չափորոշիչների հիման վրա ներկայացվել են անվտանգության մակարդակները տարբեր պետություններում: Ինչպես երևում է քարտեզից, այս չափորոշիչներով անվտանգությունը Ասիա մայրցամաքում բաժանված է 5 հիմնական մակարդակների՝ վտանգի աննշան, ցածր, միջին, բարձր և ծայրահեղ բարձր աստիճանի: Քարտեզից պարզ է դառնում, որ, օրինակ Հայաստանը գտնվում է միջին մակարդակի, Ռուսաստանը և Հնդկաստանը՝ բարձր մակարդակի, իսկ Աֆղանստանը և Պակիստանը՝ ծայրահեղ բարձր մակարդակի վտանգի գոտում:

Որքանով են այս քարտեզները օբյեկտիվ և, արդյոք ընտրված չափորոշիչները

¹ FAM International Security, <https://www.faminternational.com/>

բավարար են համապատասխան եզրահանգումների համար, կամ թե ինչ մեթոդիկայով են կատարվել այս վերլուծությունները, սրանք հարցի մի կողմն են, որոնք հետագայում, ոչ այս հոդվածի շրջանակում, առանձին քննարկման թեմա կարող են լինել: Սակայն պետք է շեշտել, որ այս քարտեզն իր թերություններով հանդերձ անգամ ցույց է տալիս այդ ժամանակաշրջանում ստեղծված ընդհանուր պատկերը, որ ձևավորվել է Ասիա մայրցամաքում և անվտանգության աստիճանը տարբեր պետություններում:

Եզրակացություն

Հետպատերազմյան Հայաստանը ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակում կարիք ունի անվտանգային միջավայրի գնահատման նոր մեթոդաբանության կիրառման: Սա շատ կարևոր է վերլուծելու և հասկանալու համար անվտանգային նոր իրողությունները և դրանց ձևավորման հիմնական գործոնները: Ներկա պայմաններում երբ ամբողջությամբ փոխվել է Հարավային Կովկասի անվտանգային ճարտարապետությունը, երբ ՀՀ-ն և Արցախը դառել են առավել քանի խոցելի անվտանգային նոր իրողությունների իրական գնահատումը դառնում է հրատապ անհրաժեշտություն: Միայն նմանատիպ գնահատմամբ է հնարավոր նոր անվտանգային ռազմավարության վերլուծություններ և մշակումներ իրականացնել:

Պետք է եզրակացնենք, որ անվտանգային միջավայրի գնահատման ու վերլուծության ընդհանուր մոդելներ գոյություն չունեն, դրանք պետք է իրականացվեն տարածաշրջանային և համաշխարհային աշխարհաքաղաքական առանձնահատկությունների, ձևավորվող նոր անվտանգային միջավայրի և այլ զարգացումների հաշվառմամբ, ինչը նշանակում է՝

1. ստեղծված իրականության մեջ անվտանգային լուծումների ավանդական մեթոդները և մոդելները չեն աշխատում, պետությունները և հատկապես ՀՀ-ն կարիք ունի ոչ ավանդական, միայն մեր տարածաշրջանին հատուկ ու մեր էթնոքաղաքական իրողություններին համապատասխան, պետության անվտանգային շահերից բխող լուծումների ուրույն մեթոդաբանության մշակման, ինչը կհամապատասխանի այն մարտահարվերներին, որոնք առկա են տարածաշրջանում,
2. պոռտությունը պետք է շահագրգռված լինեն, որ կատարվեն ակադեմիական խորքային ուսումնասիրություններ՝ հատկապես անվտանգությանն առկա ու հնարավոր մարտահարվերների, ռիսկերի շարունակական աճի պայմաններում, ինչը հիմք կհանդիսանա անվտանգային միջավայրի գնահատման համար,
3. տարածաշրջանի անվտանգային իրավիճակի ու դրա փոփոխման դինամիկայի ուսումնասիրման համար պետք է ձեռնամուխ լինել անվտանգային քարտեզների մշակմանը, ինչի համար անհրաժեշտ է համապատասխան մեթոդաբանություն՝ հատուկ միայն մեր տարածաշրջանին ու գնահատման նոր չափորոշիչներ:

REFERENCES

1. Barry Buzan, People, States and Fear: An Agenda For International Security Studies in the Post-Cold War Era - Barry Buzan, p. 57.
https://www.academia.edu/4780500/People_States_and_Fear_An_Agenda_For_International_Security_Studies_in_the_Post_Cold_War_Era_Barry_Buzan
2. Milan Jazbec, "European Integration Process Thirty Years after the End of the Cold War", European Perspectives – International Scientific Journal on European Perspectives, volume 10, number 2 (18), pp 127-152, October 2019.
https://www.europeanperspectives.org/storage/50/08-International-Scientific-Journal-on-European-Perspectives-Julij-2020_EUROPEAN-INTEGRATION.pdf
3. Ariel Davis, "Understanding the Role of Tehran and Yalta in Creating the Post-War Order", The General Assembly, Vol. 2, No. 1, Jan. 2021,
file:///C:/Users/Lenovo/Downloads/jhai,+Tehran+and+Yalta_Final.pdf
4. Arnold Wolfers, «"National Security" as an Ambiguous Symbol», Political Science Quarterly, Vol. 67, No. 4. (Dec., 1952), pp. 481-502.
<file:///C:/Users/User/Downloads/Arnold%20Wolfers%20-%20National%20Security%20as%20an%20Ambiguous%20Symbol.pdf>
5. David A. Baldwin, The concept of security, Review of International Studies (1997), 23, 5-26 Copyright © British International Studies Association,
[https://www.princeton.edu/~dbaldwin/selected%20articles/Baldwin%20\(1997\)%20The%20Concept%20of%20Security.pdf](https://www.princeton.edu/~dbaldwin/selected%20articles/Baldwin%20(1997)%20The%20Concept%20of%20Security.pdf)
6. Kjell Goldmann, 'Im Westen Nichts Neues: Seven International Relations Journals in 1972 and 1992', European Journal of International Relations, 1 (1995), pp. 245-58.
7. Barry Buzan, "New Patterns of Global Security in the Twenty-First Century", International Affairs, 67.3 (1991), 433.
8. Global Risk and Crisis Management, <https://www.result-group.com/en/world-threat-map-2017-gefahrenkarte/>
9. Global Securit Map. <http://globalsecuritymap.com/>
10. FAM International Security, <https://www.faminternational.com/>

РЕЗЮМЕ

Манвелян Армен

*Национальная академия наук РА, Институт Востоковедения,
Департамент международных отношений, Старший научный сотрудник,
кандидат исторических наук,
Ереван, Республика Армения*

Государственную безопасность нужно рассматривать с точки зрения устойчивого развития. Долгие войны в прошлом привели к первой попытке урегулирования отношений безопасности между государствами в Европе - Вестфальскому договору.

Распад СССР и последующие 32 года показали, что системы безопасности несовершенны и уязвимы. За последние несколько лет многочисленные военные конфликты очеред-

ной раз доказали, что так называемая пост-ялтинская система безопасности уже не действует.

В новой военно-политической ситуации, сложившейся в последние десятилетия, возникает необходимость создания новой методологии оценки безопасности.

Необходимо констатировать, что не существует общих моделей оценки и анализа безопасности, они должны реализовываться с учетом региональных и глобальных геополитических особенностей. Государствам и особенно РА необходимо разработать уникальную методологию, специфичную для нашего региона и в соответствии с нашими этнополитическими реалиями, вытекающими из интересов безопасности государства.

Государство должно быть заинтересовано в проведении академических исследований, особенно в условиях постоянного роста вызовов и рисков безопасности, что послужит основой для оценки среды безопасности.

Ключевые слова: Государство, управление, безопасность, стратегия, система безопасности, анализ, методология.

SUMMARY

Manvelyan Armen

Senior Research Fellow, Department of International Relations,

Institute of Oriental Studies, National Academy of Sciences RA,

Ph.D. in History,

Yerevan, Armenia

State security should be considered from the point of view of sustainable development. Long wars in the past led to the first attempt to regulate security relations between states in Europe - the Treaty of Westphalia.

The collapse of the USSR and the subsequent 32 years have shown that security systems are imperfect and vulnerable. Over the past few years, numerous military conflicts have once again proved that the so-called post-Yalta security system no longer works.

In the new military-political situation that has developed in recent decades, there is a need to create new methodologies for assessing security.

It must be stated that there are no general models for assessing and analyzing security; they must be implemented taking into account regional and global geopolitical features. The states, and especially the Republic of Armenia, need to develop unique methodology, specific to our region and in accordance with our ethno-political realities, arising from the interests of the state's security.

The state should be interested in conducting academic research, especially in the context of the constant growth of security challenges and risks, which will serve as the basis for assessing the security environment.

Keywords: State, management, security, strategy, security system, analysis, methodology.